Դպրոցի այդ մասը, որ ծառայում է իբրև մթերանոց, կարելի է կարգի բերել և յարկացնել ապաստարանի, ուր կտեղաւորուեն 30-ի չափ աշակերտներ։

1914 թւին ընդունածս դպրոցի շէնքը մատնուած էր խիստ անուշադրութեան՝ — սուաղները թափուած, դռները խարխուլ՝ առանց փականների, առանց բակի ու ցանկապատի, մի խօսքով այծերի և անասունների հանգստատեղի էր։ Մեծարգոյ բարերարն ու հոգաբարձուք ընդառաջ գալով իմ խնդրին՝ հիմնական նորոգութեան ենթարկեցին, որ վերջացաւ սեպտեմբերի 12-ին։

Դպրոցը 1914—15 ուս. տարւայ մէջ մուտք է ունեցել Թոշակագրամ աշակերտներից 412—50 կոպ., պ. Գասպար Տէր Մարգարեանից նպաստ 2300 ռ. ռոճիկ ուսուցչաց։ Իսկ 401—24 կ. էլ դպրոցի նորոգութեան, ծախք եղել է 3551 ռ. 57։

Աւագ ուսուցիչ՝

Գ. Տէր Մինասեան.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մեղրու վեցամեայ Ծխական Դպրոցի 19$^{14}/_{15}$ ուս. տարուայ.

Մեղրու դպրոցն այս տարի բոլորեց իր 35 ամեակը, մի ժամանակամիջոց, որը պատուաբեր է ծխական դպրոցի համար։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում հետզհետէ յառաջադիմել է և չէ մնացել հնութեան գրկում։ Հասարակութիւնը և վարչութիւնը իրենց ուժերի ներածին չափ ամեն կերպ նպաստել են բարձրացնել դպրոցի տնտեսական և թէ՝ յառաջադիմութեան ընդհանուր մակարդակը։

Դեռ անցեալ ուսումնական տարուայ վերջում միտք էր առաջացել տօնել դպրոցի յօբելեանը, սակայն ներկայիս աղէտներով լի ժամանակներում այդ միտքն իրականացնելն անհնարին եղաւ։ Չնայած այն հանգամանքին, որ ներկայ ժամանակի տարրամ դրութեան շնորհիւ շատ տեղերում դպրոցները փակեցին, կրճատուեցին նրանց նախահաշիւ-

ները, և շատ տեղերում ուսումն անկանոն ընթացաւ, Մեղրու դպրոցի վարչութիւնն ամեն կերպ աշխատեց, որ իր դպրոցը յաջող ընթանայ այս տարի ևս, առանց պակասեցնելու մանկավարժական կողմը։

Նախնական աշխատանքները դպրոցում սկսուեցին 1914 թ. օգոստոսի 25-ից, կանոնաւոր դասերը՝ սեպտեմբերի 4-ից և տեւեցին մինչև սոյն թուի մայիսի 24-ը, որ օրը և կատարուեց տարեվերջի ակտը։

Դպրոցն ունի իր սեփական շէնքը, բաղկացած 7 սենեակից, որոնցից մէկը ուսուցչանոցն ու գրադարանն է, իսկ մնացեալ 6-ը դասարաններ։

Բոլոր 6 բաժանմունքներում կայ 174 աշակերտ. աշակերտուհիներ. որոնցից 75 տղաներ իսկ 99-ը աղջիկներ։

Աշակերտների միապաղաղ կեանքի մէջ փոփոխութիւն մտցնելու համար կազմակերպուել է 4 երեկոյթ. ցերեկոյթ և երկու զբօսանք։ Մանկավարժական խորհուրդը բաւականացել է դրանով նախ ի նկատի առնելով ներկայ անպարեպատեհ ժամանակը և ապա՝ որ նման թարմացուցիչ երեկոյթները որքան էլ նպաստաւոր լինեն, այնուամենայնիւ պէտք է քչով բաւականանալ, որովհետև նախ սաներն են ծանրաբեռնուում կողմնակի աշխատանքներով և ապա կանոնաւոր պարապմունքները իրենց նորմալ ընթացքից դուրս են գալիս։

Միանգամայն վերացնելով թէ չը սովորելու և թէ չարութեան համար որևէ մարմնական պատիժ և ընդունելով բարոյական ազդու միջոցներ, միևնոյն ժամանակ խստիւ հետամուտ է եղած սաների կարգապահութեանը թէ դպրոցում և թէ դրսում։

Սաների աշխարհայեացքը լայնացնելու, նրա ընդհանուր զարգացմանը նպաստելու համար տեղի են ունեցել շաբաթական մէկ դաս՝ ընթերցանութեան դասեր։ Դասերը եղել են կանոնաւոր, պարտադիր և յանձնուել են դաստիարակներին, տեւողութիւնը եղել է 50 ր. և կազմուել է երրորդ ժամին։

Քանի որ աշակերտութեան մէջ նկատուած թերու-

թիւնները բնութեան առնելուս միշտ պարզուած է, որ դրանց տրամաբը թագնուած է այն ընտանիքներում, որտեղից նրանք դուրս են եկել և որոշեալ ընտանիքը մարդուս մշտական դպրոցն է, ուրկից ապրում նրա մանկութեան շրջանում և եթէ ընտանիքը չը կիրառէ դպրոցի կատարածներն ու պահանջները երեխաների վերաբերմամբ, այդ դէպքում անհնարին կը լինի դատարակել մանկան, ուստի որոշուց ունենալ ծնողական հերթական և արտակարգ ժողովներ։ Առաջին անգամ Մեղրիում կրթական-դաստիարակչական խնդիրների համար այս տարի ունեցաւ 4 ծնողական ժողով, որոնցից 2-ը հերթական էին իսկ 2-ը արտակարգ։ Այդ ժողովներում, երբ նախապատրաստում էր դպրոցը ու. ուսց. նուրեռ միւս ուսուցիչների հետ արծարծում էր հարցերը, հասարակութիւնը կարծէք ուրիշ սերտ միացաւ դպրոցի հետ և ստիպեցնելով իրականացրեց իր երեխաների վերաբերմամբ արած որոշումները, որոնք բաւական շօշափելի արդիւնքի հասան։

Մանկամարժական կազմը այս ուսումնական տարուայ ընթացքում ունեցել է 34 հոգի, որոնց կենտրոնական նիւթը եղել են մանկամարժական զանազան հարցեր։ Այդ քանակի մէջ են մտնում և շրջանային երեք ժողովները, որոնց ժամանակ իմիջի այլոց որոշուած են եղել և շրջանում ու Մեղրիում ունենալ փորձնական դասեր, որը և տեղի է ունեցել Կաուսիմիս գիւղում 2 դաս և Կարճևան գիւղում նոյնպէս 2 դաս, իսկ Մեղրիում, շրջանի ուսուցիչների ցանկութեան համաձայն տեղի չեն ունեցել, տրամաբրութիւնների բարձրացած և ընդհանուր դրութիւնն ընկած լինելու պատճառով։ Նիստերից 6-ն էլ եղել են խառը հոգաբարձական և մանկամարժական, իսկ հոգաբարձութիւնը ուսուցչի մասնակցութեամբ և ձայնի իրաւունքով (ոչ տնտեսական հարցերում) ունեցել է 14 առանձին նիստ։ Մանկամարժական ժողովներում միշտ մասնակցել է մանկամարժական խնդիրներում առանց ձայնի իրաւունքի, իսկ տնտեսական և ընդհանուր հարցերին՝ ձայնի իրաւունքով, հոգաբարձութեան ներկայացուցիչը։

Տարուայ ընթացքում երեք անգամ վերստուգումներ են տեղի ունեցել ամբողջ դպրոցում, որոնց միշտ ներկայ է եղել հոգաբարձուներից մէկն ու մէկը։ Հոգաբարձութիւնը բացի դրանից միշտ ներկայ է եղել դասերին, ինչպէս և աւագ-ուսուցիչը իր ազատ ժամերից օգտուելով լսել է դասատուների դասերը, նախօրօք յայտնելով այդ մասին նրանց։

Վերջացնելով սոյն համառօտ տեղեկագիրը, յոյս ենք տածում, որ դպրոցը հաղթահարէ կը յառաջադիմէ և դպրոցի գլուխ կանգնած անձնաւորութիւններն իրենց ջանքերը չեն խնայի որովհետև բաւական չէ գործ կատարել, փող ծախսել, մեծ խումբ կազմել, այլ հարկաւոր է ամեն ինչ այնպիսի հիմքերի վրայ դնել, որ ոչ դրամը և ոչ էլ աշխատանքը իզուր չը կորչեն։

Գալով ժողովրդին՝ սրտի բերկրանքով պիտի ասենք, որ ազատուել է գիւղական սովորական տգիտութիւնից ու խաւարամտութիւնից, նա արդէն ընդունել է ուսման իսկական արժէքը, ուրեմն և առաջայում ոչ միայն չի կարող երես դարձնել իր դպրոցից, այլ աւելի ես ամուր կը գրկէ։

Մի քանի խօսք էլ դպրոցական շէնքի մասին։ Մեր դպրոցի շէնքը չը նայած համեմատաբար գիւղական դպրոցների շէնքերի հետ շատ գեղեցիկ է, բայց ունի խոշոր պակասութիւններ, որոնցից ամենառաջինն է խոնաւութիւնը։ Պէտք է անպայման նոր շէնք ունենալ։ Այդ կարևորութիւնը չը նայած զգացողներ կան, բայց հարկաւոր է լուրջ գործի ձեռնարկել և եթէ ոչ այժմ, գոնէ առաջիկայում կատարուելիք յոբելեանին ամենից առաջ այդ պէտք է աչքի առաջ ունենալ։

Նախագ. Մանկ. խորհ.

Արշալոյս Տէր Յովհաննեան

Յունիս, 1915 Թ. Մեղրի